

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գր.ում են միմիայն խմբագրատան մէջ.

Մի.ր. հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆ. № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտուն 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆ. № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԹԻՆ

Կուլտուրական շաղի սկզբում. — ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՆ. Մամուլ. Նամակ երեսանից. ՆԱ-
ՍԱՆԻ ԽՈՐԵՐ. ԱՐՏԱՆԻ ԽՈՐԵՐ. — ՀԵՆՐԻ-
ԳԻՆԻ. ՏԵՍՈՒԹԻՆ. Արտաքին լուրեր. — ԲԱՆԿԱ-
ՍԻՐԱՅԻՆ. Պետական գործեր հասարակական գիտու-
թեան մէջ.

ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՇԱՒԻՆ ՍԿԶՐՈՒՄ

Խօսելով Պարսկաստանի մէջ նկատվող
կրթական կուլտուրական շարժման առա-
ջին քայլերի մասին, մենք նկատեցինք, որ
Պարսկաստանում ապրող Հայ տարրի հա-
մար այժմ ներկայանում են նպատակաւոր
պայմաններ թէ իր զարգացման գործը ա-
ռաջ տանելու եւ թէ օգտուէն լինելու
այն երկրին, որի մէջ նա գտնվում է:
Պարսկահայը չէ մոռացել դեռ, որ նա մի
ժամանակ կուլտուրական առաջադիմու-
թեան շաղի վրա էր կանգնած եւ որ նրա
ցեղակիցները Ռուսաստանում առաջ են
գնացել թէ մոտաւոր եւ թէ տրդւնագոր-
ծական ասպարէզներում: Նա եւս գտնում է
պահանջ առաջ գնալու եւ բարձրանալու:

Սակայն նրան պակասում են միջոցներ
սեփական ոյժերով կազմակերպել իր կըր-
թական եւ արդիւնագործական առաջադի-
մութեան գործը: Ժամանակով, երբ հաս-
տատուն բնաւորութիւն կը ստանան ներ-
կալ սկզբնական քայլերը եւ տեղական ինք-
նագործութիւնները բաւականաչափ կու-
ժեղանայ, այլ եւս պէտք չի լինի կողմնակի
օժանդակութիւնների. բայց այժմ, երբ
դեռ նախնական ակօսներն են գգվում ան-
մշակ հողի վրա, անհրաժեշտ են կողմնա-
կի աջակցութիւն եւ պաշտպանութիւն:

Ներկայումս ծրագրվում են նոր դպրոց-
ներ թէ Ատրպատականում եւ թէ Նոր-
Ջուղայի շրջաններում: Ատրպատականի
զանազան գիւղերում արդէն գոյութիւն
ունեն դպրոցներ, որոնք սակայն բաւա-
րար կերպով չեն ապահովված եւ կարօտ
են աւելի հմուտ մանկավարժական ղեկա-
վարութեան: Եղած դպրոցների բարեկար-
գութիւնը եւ նորերի բացումը—գրանք

հերթական հարցերն են Ատրպատականի
Հայ ժողովրդի եւ առաջնորդարանի հա-
մար:

Աւելի անմխիթալ վիճակի մէջ է գտնու-
ում Նոր-Ջուղայի շրջանը: Այնտեղ գիւ-
ղական դպրոցներ չը կան եւ զբաղիտու-
թիւնը շատ թույլ է զարգացած: Նոր-Ջու-
ղայի շրջանի հայութիւնը մի ժամանակ
մեծ կուլտուրական դեր է խաղացել թէ
իր շրջակայքում եւ թէ ուրիշ տեղերում
գտնվող հայերի համար: Երբ որ այդ հա-
յերը Հին-Ջուղայից բնաւորաւոր Շահարա-
կարգադրութեամբ դէպի Պարսկաստանի
խորքերը եւ հաստատվեցին Սպահանի մօտ,
այն ժամանակ մայր երկիրը թշուառու-
թիւնից աչք չէր բաց անում իր մօտաւոր
կրթութեան գործը զարգացնելու համար.
Իսկ Նոր-Ջուղայիցները, նման Ֆրանսիա-
կան հուգենոսներին, մայր երկրից դուրս
գտնելով մի քանի գիւղութիւններ, զար-
գացրին արհեստը, վաճառականութիւնը
եւ սկսեցին նպաստել Հայկական կրթական
եւ ազգային գործին:

Անցան ժամանակներ, Պարսկաստանի
խաւար միջոցները կամայկանաւորաւոր
եւ թաւառեցին այն հարուստ ընդունե-
լը, որոնք բուսել էին Նոր երկրի վրա եւ
այժմ մեր առաջ նոյն մարդիկը ներկայա-
նում են յետմնաց, ողջ եւ կարօտ լու-
սաւոր աջակցութեան: Մի ժամանակ նը-
րանք էին գտնվում առաջնորդող եւ ղե-
կավարող վիճակի մէջ, իսկ այժմ նրանք
կարօտ են առաջնորդութեան եւ ղեկավա-
րութեան: Նոր-Ջուղայի շրջանում գոյու-
թիւն ունեն քանակաւոր աւելի Հայ գիւ-
ղեր, կարօտ այդ աջակցութեան: Ինչպէս
չայնիս է այդ շրջանում արդէն որոշված
է բանալ բարեկարգ կենտրոնական մի դպ-
րոց Գ. Բանաստեանի հաշուով: Դա մի գե-
ղեցիկ, օգտակար ձեռնարկութիւն է: Սա-
կայն ցանկալի է, որ նոյն օրինակով բաց-
վեն տարրական դպրոցներ եւ գիւղերում
եւ այդպիսով ստեղծվեն կրթական հիմ-
նարկութիւնների մի ցանց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Տխուր հոգեկոմ մեր երկրից հեռացած Վե-
րիկոն դարձեալ խօսեցին առեց իր մասին
նա այժմ ընկերացել է «СВѢТЪ» անունով խա-
ւարաւոր լրագրի խմբագիր Կոմարովի հետ եւ
միասին ձեռք է բերել Կառուկի հիմնած «Рус-
ский Вѣстник» ամսագիրը, որ այսուհետեւ
պիտի հրատարակվի Պետերբուրգում: Նոր խմ-
բագրութիւնը տպագրել է լրագրի ներսեւ
լուսնի, որոնց մէջ փառաբանված են երկու
միացած խմբագիրները: Թէ ինչ է ասում ընդ-
լամը Կոմարովի մասին, այդ այնքան հետաք-
րական չէ մեր ընթերցողների համար: Իսկ
Վասիլի Վերիկոն իր մասին այն փառաբանու-
թիւնն է տպել, թէ Կովկասում մի քանի տարի
վարել է խմբագրի պաշտօն եւ իր ու իր ցոյց է
տուել թէ որքան հայրենասէր է. այդ պատճա-
ռով էլ նա, իբր թէ, թողել է ամենալաւ աը-
պաւորութիւն: Ռուսաց լրագրի ներքին մի քա-
նիսը արժանի պատասխան տուին այդ ընդ-
լամներին, յիշեցնելով թէ ինչ դեր էր կատա-
րում Վերիկոն թիֆլիսում: Նոյն օրինակով «Кав-
казский Вѣстник» ամսագրի վերջին համա-
րում տպված է Հայը թէ վրացին վերնագրով
մի յօդուած: Այդ յօդուածի հեղինակը, որ
ծածկված է Վ. Գ. Կ. տառերի տակ, յայտնում
է որ ինքը հայ է, խորթ է հայրենասիրական
զգացմունքին: Նա եղել է Վերիկոնի համակ-
որդներից, նոյն իսկ աշխատակցի է Վերիկոնի
«Кавказ»-ն: Ինչպէս 1898 թ. Երևանում, երբ ան-
ձամբ համոզվել է մի դէպքից, որ իրան էր
վերաբերում, թէ որքան անազնու հրապարա-
կախօս է Վերիկոն, որքան նրան կուրացրել է
հայատեացութիւնը, որքան անընդունակ է
դարձել նոյն իսկ մի սովորական, հասարակ
փաստ հասկանալու: Նա բերում է իր հետ
պատահած դէպքի նկարագրութիւնը եւ հետե-
ւեցնում է, որ Վերիկոն չուղէր հրապարակա-
խօսների տիպին եւ պատկանում:

Լինելով սկզբում նրա (Վերիկոնի) հրապա-
րակախօսական գործունէութեան կողմնա-
կիցներից մէկը եւ ունենալով մասնակցու-
թիւն նրա լրագրի մէջ, եւս զրանից յետոյ
չուտով յետ վերցրել Վ. Վերիկոնից իմ ձե-

ռագրիները եւ նրա վերջին նամակին, ուր
նա զարմանք էր յայտնում այս օրինակով, ա-
ւելորդ համարեցի նոյն իսկ պատասխանել:

Բայց հարցը այս պատմութեան չէ վերա-
բերվում: Յօդուածագիր պ. Գ. իր պատմածով
ոչինչ չէ աւելացնում այն բոլոր նիւթերի վրա,
որոնք արդէն չափազանց շատ են կուտակված
Վերիկոնի բարոյական կերպարանքը բնորոշելու
համար: Մենք ասացինք, որ յօդուածագիրը ընտ-
րել է վերնագիր «Հայը թէ վրացին»: Ինչ է
ուզում գրանով ասել: Բերելով մի քանի օրի-
նակներ Վերիկոնի նման մի քանի ուրիշ առա-
հրապարակախօսների քաջագործութիւններից,
հեղինակը բացատրում է, որ այդպիսի գրուածք-
ները ոչինչ օգուտ չեն բերի մեր հասարակու-
թեան, նրանք միայն գրողում են, չօլինիտա-
կան զգացմունքներ են զարթեցնում: Ինչպէս
վրացիները այն մրցութիւնը, որ տեղի ունի հա-
յերի եւ վրացիների մէջ ազգայնական հողի
վրա: Յօդուածագիրը գտել է միջոցը եւ ա-
սում է, թէ մարդիկ եղբայրանալ կարող են,
վերացնելով, ոչնչացնելով այն, ինչ կոչվում է
հայրենասիրութիւն: Չարիքը ամբողջովն այդ
հայրենասիրութեան մէջ է. Հայը, վրացին ի-
րանց անպատճառ հայ, վրացի են համարում:

Բայց աւելի բարձր չէ՞ լինել մարդ,
այս խօսքի կատարելով իմաստով (ինչպէս
ասում է Հայտնաւոր իր հօր մասին, կամենա-
լով ապա նրան բարձր տիտղոս), քան լինել
միայն վրացի կամ հայ: Չուղիղով մարդ-
կութեան մէջ, չը կայ պատճառ թշա-
ւառութեան անկ եւ նիգալիներ կորստանալ
ինքնուրոյնութեան, իր ազգային շահերի հա-
մար, գրգռել իր չար կրքերը, մոռացնելով
երկրային գոյութեան առանց այն էլ ոչ-փայ-
լուն օրերը:

Սա, մեր կարծիքով, հարցի լուծում չէ:
Այսպէս վճռել մի երեւոյթ, որ ծնվել է մարդ-
կութեան հետ, հազարաւոր տարիների կեանք
ունի, շատ նման կը լինի այն բանին, որ մենք
ցանկանայինք, որ աշխարհը անմարմին եւ ա-
նարիւն էակներով լինէր: Երանելի է Շատ լու-
կը լինէր, իհարկէ, եթէ մեր երկիրը այդպիսի
էակների հայրենիք լինէր. այն ժամանակ չէր
լինի, երեւի, ուտելու եւ խմելու կարիք,
տեղի չէր ունենայ գոյութեան կոխ եւ
գաղթ քայլի հետ կապելու խաղաղ: Բայց
այդպէս չէ աշխարհը, ինչ կը հրամայեք անել:
Հեշտ է միանգամայն վերցնել եւ ջնջել մարդ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Երջանկութեան առեղծուածը)

Անա այդ հարցի պատասխանն է կազմում
նիւթական սօցիոլոգիայի զբաղման մասը: Ան-
կուր, այլասեռութիւն չեն տանում ճակատագրա-
պէս դէպի անէպոստ, դէպի մահ: Գաղաքա-
կրթութեան աշուեն է հիմա... Ինչպէս որ աշ-
խարհը դեղնած տերեւները թափվում են գետ-
նից առաջիկայ գարնան վերադառն կանաչեղ-
համար, այնպէս եւ քաղաքակրթութեան ներ-
կալ անկումը կարող է լինել մի նախաշաղի
դէպի նոր վերածնութիւն, դէպի աւելի բարձր
շրջան մարդկային գոյութեան: Այնտեղ, այն
շրջանում գերմարդն է (Uebermensch), որ
միանձնապէս պիտի թագաւորէ: Այնտեղ կը կեր-
պարանոցվեն բարոյագիտութեան ներկայ
նօրերը եւ կը ստեղծվեն ճնոր արժէքներ, կը
վերաստատվի բնական անհատագործութիւնը,
կը վերականգնի ազնւական հասարակութիւնը:
Բաժանված գաւառ կաստաների, իւրաքան-
չիւրը զրանցից կունենայ իր առանձնաշնորհում-
ները, իր իրաւունքներն ու պարտականութիւն-
ները: Ստորագոյն կաստան կը կազմէ ամբողջ,
կը կազմեն ստորակները, նրանք կը պահվեն
հիւսնազանդութեան մէջ: Իրանց աշխատան-
քով նրանք կը կերակրեն բարձր կաստաններին:
Կենսաբ. նրանց համար սեւ է, դժուար, բայց
զա բնական օրէնք է: Կրօնը անգնահատելի բա-

րէք է նրանց համար, հաւատը եւ հանդերձեալ
կենսաբ. յոյսը լուսաւորում են նրանց խղճուկ,
կիսանաւանական կենցաղը եւ խաղաղութիւն
են բերում նրանց սրտերին:

Հաւատ եւ ստրկութիւն—այս է հսկայական
ամբողջ դերը Նիւէլի երեւակայական հասարա-
կութեան մէջ: Այն ինչ գերմարդիկ, խելքի ու
գործութեան այդ ընտիրները՝ իրանց բաժին
կունենան կենսաբ. վայելքները եւ գերագոյն
հրամանատարութիւնը: Խուլ ու անտարբեր
նրանք կը դիտեն զազիր ամբողջ թշուառու-
թիւնը եւ միշտ աւելի ու աւելի կը հրեն նրան
դէպի տառապանքի անդունդը: Այդպէս պիտի
արտայայտվի գերմարդի վեհանձնութիւնը: Գա-
ռն... աշխուրդը դատարկ խօսք է միայն,
նչ մի գիտութիւն, կարծրացեալ—կոշտ է Չա-
րադուստրա...

Մարդը, ըստ Նիւէլի, մի պարան է՝ ձգված
անասունի եւ գերմարդի միջեւ. նա նպատակ
չէ, այլ անցողական մի աստիճան, մի կամուրջ,
նա պիտի կորչի եւ տեղի տայ գերմարդին:

Մարդը, ըստ Նիւէլի, մի պարան է՝ ձգված
անասունի եւ գերմարդի միջեւ. նա նպատակ
չէ, այլ անցողական մի աստիճան, մի կամուրջ,
նա պիտի կորչի եւ տեղի տայ գերմարդին:

Միտերիցով եւ յոռետեսութեան ալիքները

քան մեծ եւ կսկծալի չէ եղել, ինչպէս մեր
էպիսոպոստ. ամեն բան հիմնված է կեղծիքի
վրա, կրօն, շնորհ, մօրալ, դատարարակու-
թիւն, գեղարուեստ—բոլորն էլ կեղծ, աղաւաղ-
ված, անբովանդակ եւ խախտ... (O. Lourié,
Pensées de Tolstói):

Ինչ անել: Հակառակ Նիւէլին եւ Կարայիւնի
Տօլստոյ չէ խախտում թույլերի, ճշմարտի
ոչնչացումը, մինչեւ իսկ նրանց ստորագրումը.
նա ջերմ, հաւատարմ, քրիստոնէական է, տողո-
ված քրիստոնէական կրօնի հիմնական, համա-
մարդկային սկզբունքներով: Կարի ու բիրտ
ուժի տեղ նա սէր է քաղաքում: Հասարակու-
թիւնը վատ է, որովհետեւ մարդիկ իրանք վատ
են, պէտք է փոխել ուրեմն նախ եւ առաջ
մարդկանց:

Ռուսոյի պէս՝ Տօլստոյ եւս հաւատում է,
որ մարդիկ ի բնէ բարի են եւ որ ժամանակա-
կից կեղծ քաղաքակրթութիւնն է նրանց աղճա-
տել: Պէտք է հաստատել ճշմարիտ դատար-
արակութիւն ընտանիքի մէջ, բայց յառաջ
քան այդ՝ պէտք է վերանորոգել ընտանիքը
սիրոյ եւ աշխատանքի խորիմանքի վրա:

Թէօրիան շատ պարզ է. կենսաբ. սիրուն է
եւ երջանկութիւնը գոյութիւն ունի: «Աշխա-
տեցէ՛ք, մի հարստանա՛րէ՛ք, մի սպանէ՛ք, այլ
միայն սիրեցէ՛ք, մարեցէ՛ք ձեր կենսաբ. մար-
բեցէ՛ք ձեր խեղճը—եւ դուք կը լինէ՛ք երջա-
նիկ...»

Երան... Միայնիտ մարի բանագործանք-
ները, անշուշտ Այդպէս են բոլոր ուտապիստ-
ները. կենսաբ. հսկայական պրօբլէմը պատկե-
րանում է նրանց չափազանց պարզ, անպաճոյճ
եւ նրանք գրչի մի ուժգին հարուածով խիզա-

կային կենսաբի առնական կոչումները մեկը— հայրենասիրությունը, թայց դա, ինչպես բացատրում էր Դոբրոլիբովը, բնական մի պահանջ է մարդու համար։ Մարդը ամենից շատ իր մերձավորներին է սիրում։ Երեխան նախ իր ծնողներին է սիրում, ապա իր ընտանիքը, ապա իր քաղաքը, իր գիւղը, ապա, երբ դարձնում է նրա սէրն էլ աւելի լայն է դառնում, նա սկսում է սիրել իր հայրենիքը, մարդկությունը։ Զգալիորեն, իսկական, անխաբար հայրենասիրությունը միայն մի ազնիւ զգացմունք է եւ հարկ չը կայ նրան պոկել մարդու սրտից։ Մենք միանգամայն համաձայն ենք յօդուածագրի հետ, որ վատ է եւ շատ վատ է, երբ հայկական բանկում միայն հային են տեղ տալիս, ինչպէս վրաց բանկում միայն վրացին կարող է տեղ ունենալ։ Դա հրէշաւոր երեւոյթ է։ Բայց ինչ գործ ունի այդ երեւոյթի հետ իսկական, մաքուր հայրենասիրությունը։ Ուրիշ բան է, այո՛, երբ հայրենասիրությունը աղճատվում է, դառնում մարդակերութիւն յանուն հայրենասիրութեան, երբ մարդը մի ուրիշ մարդու վերաբերմամբ գայլ է դառնում այն պատճառով, որ այդ ուրիշը մի ուրիշ ազգութեան է պատկանում։ Բայց չը մոռանանք, որ բոլոր սուրբ գաղափարները կարող են այլանդակել, ամենահրէշաւոր յանցանքների պատուական դատարն։ Նայեցէ՛ք ձեր շուրջը եւ դուք բազմաթիւ վեհ գաղափարներ կը տեսնէք արեւմտ դիակներ դարձած, որոնք թաւալում են ցեխերի մէջ։ Պահանջեցէ՛ք, որ գաղափարը չարտաւարովի, որ սկզբունքները վեհ ու ամբիժ մնան—եւ դա հասկանալի կը լինի։ Զը պէտք է իտանդի իսկական հայրենասիրութիւնը չօլիներդի հետ։ Գլխաւորապէս մի իսկական հայրենասէր էր եւ հէնց այդ պատճառով էլ սիրում էր ամբողջ մարդկութիւնը, մարդ էր՝ այս բառի բուն նշանակութեամբ։ Որովհետեւ իսկական հայրենասիրութիւնը մի եւ նոյն ժամանակ եւ մարդասիրութիւն է, իր հայրենիքին ազնուութեամբ ծառայողը, իր հայրենիքը հանրամարդկային գաղափարներով առաջ տանողը ծառայում է ընդհանուր մարդկութեան։ Ազնիւ, շիտակ հայրենասիրութիւն եւ մարդասիրութիւն—դրանք միացած են իրար հետ, մէկը միւսին լրացնում են։ Զուր բան է հրէշաւոր կերպով այլանդակված հայրենասիրութիւնը, չօլիներդի մի այդ չարիքի դէմ—դա իսկական հայրենասիրութեան անմիջական պարտականութիւնն է։ Եւ մենք տեսնում ենք, որ հէնց այդ կուով են զբաղված բոլոր լաւագոյն հայրենասէրները։ Եւրոպայում։

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Ապրիլի 30-ին

Վերջին անպատկեր գրտերի հասցրած վնասը խաղողի այգիներին Երեւանեան նահանգում, ըստ երեւոյթին, աւելի մեծ է քան ենթադրվում էր։ Ապրիլի առաջին տասնեակը անցաւ խիստ

խուռ եւ տալ նրա լուծումը։ Ուտոպիստ էր Ռուսոն, որ իր սրտայայտ միամտութեան մէջ կարծում էր tabula rasa անել հազարաւոր տարիների կուլտուրական պրօցէսը եւ յետ չընել մարդկութիւնը զգալի նախնական, առերեւոյթ «երկնային», բայց իրօք վայրենի եւ արհաւիրելի չընան։ Ուտոպիստ էր Կարլայլ, որը XX-րդ դարի չէմբում ուզում էր յետ կանչել վաղուց արդէն յաղթահարված կաստային ֆէոդալականութեան ուրուականը։ Ուտոպիստ էին Նիչէն եւ Շտրինգեր, որոնք ուզում էին առոյնչել համարել մինչեւ այժմ եղած հոկայ պրօգրէսը եւ յաւանդում էին վայրագ էգոյիզմի թագաւորութիւնը հիմնել ժամանակակից կարգերի վրա։ Ուտոպիստ է Տօլստոյ, որ հաւատում է իր քարոզչների ամենակարող ոյժին։ Բարոյական ծայրը այն ժամանակ միայն ոյժ ու ազդեցութիւն ունի, երբ որոշ ներդաշնակութիւն կայ նրա եւ տիրող իրականութեան միջեւ, երբ նա որոշ չափով արձագանք է հանդիսանում հասարակութեան թմրած կամ արթնութեան տրամադրութիւններին։ Այդպէս նա անպատկեր մէջ քարոզող մի ձայն է։

Բարոյական քարոզչների ընդհանրապէս շատ քիչ են ազդել հասարակական զարգացման ընթացքի վրա։ Մշակութային եւ անվերածելի հակառակութեան մէջ քարոզչական անթիւ թօրիաները մէկ կէտում միայն համերաշխ են գտնվում—այն՝ որ չը կայ համաշխարհային մի բարոյականութիւն, չը կայ մի մարքիս, բարոյական մի սկզբունք, որ բացարձակ ոյժ ունենար համայն մարդկութեան համար եւ որի կիրառումով կարելի լինէր լուծել մարդկային գերազոյն երջանկութեան առեղծոածը։

անձրեւային եւ փոփոխական կերպով, երբեմն օդի մէջ երեւում էր նաեւ ձիւն։ 11-ին, 12-ին փչում էր սառը քամի, սարերը ծածկվեցին ձիւնի հաստ շերտով, նորարոգող խաղողի վաղեր ծածկվում էին գիշերային ցողով, այս բոլորից յետոյ ոչ ոք չէր կասկածում, որ այգիները մեծ վնասներ պիտի կրեն։ Եւ զատկական տօներին ու նրա յաղորդ օրերի ընթացքում աստիճանաբար նահանգի զանազան կողմերից հասան ցրտահար եղած այգիների մասին։ Ժողովուրդը Յուրաք միւսակ է նահանգի համարեալ բոլոր մասերի այգիները, ի հարկէ, աւելի կամ պակաս չափով։ Վնասները աւելի զգալի են մտնաւանդ այն մասերում, ուր խաղողի մշակութիւնը եւ գինեգործութիւնը բնութում են գրեւաւորապէս պարապմունքների շարքում։ Բացառիկ տեղը Այսպէս, թէեւ ցրտերը վնաս հասցրել են նաեւ Սուրմալուի, Նախիջևանի եւ Շառուր-Դարալագեզի գաւառներին, բայց այն հանգամանքը, որ այս երեք գաւառներում խաղողի այգիները բնութում են նահանգի այգիների ընդհանուր տարածութեան մի փոքր մասը, այդ պատճառով նրանց կրած վնասը այնքան զգալի չէ, որքան էլ միմյանի եւ առանձնապէս Երեւանի գաւառներին հասած վնասը։

Հիմնվելով «Памятная книжка Эриванской губернии на 1902 год» պատճենական ժողովածուի վրա, խաղողի այգիները Երեւանի նահանգում բնութում են 10,298 դեռետարին, որի 470 դեռետարին բնկած է Շարուր-Դարալագեզի գաւառում, 500 դեռետարին Սուրմալուի, 880-ը Նախիջևանի, 3,000—էլմիսանի եւ վերջապէս 5448 դեռետարին Երեւանի գաւառում։ Ինչպէս տեսնում էք, ամբողջ նահանգի այգիների տարածութեան կէս մասից աւելին բնկած է միմիայն Երեւանի գաւառում եւ եթէ ի նկատի առնենք, որ այդ գաւառին հասած վնասը, նորիս նրա դիւրի, աւելի սուր կերպով է արտայայտվել, այն ժամանակ հասկանալի կը լինի վնասի այն չափը, որ ցրտերի պատճառով կրել է Երեւանի գաւառը։ Երեւանի գաւառի այգիները մեծ մասամբ բնկած են դաշտային մասերում՝ մասնաւորապէս Զանգի-Բասար եւ Գեաւանի-Բասար կոչված շրջաններում։ Այս մասերում հողերի քանակութիւնը, համեմատած ազգաբնակչութեան թուի հետ, շատ անկաւ է (բոլոր գաւառների մէջ ամենից խիտ բնակեցրած գաւառը Երեւանինն է)։ Այս քանակութիւնը վերստի վրա հաշվելով 46 բնակիչ) եւ որովհետեւ միւս բերքերից աւելի արդիւնաւէտը համարվում է խաղողի մշակութիւնը, այդ պատճառով այդ երկու շրջաններում աւելի քան յիսուն հեկտեր, իրանց հողերի մեծ մասը պարագեցրել են խաղողի այգիների վրա։

Այս մասերում իսկապէս ցուրտը գործել է իր աւերածիչը։ Խաղողի սեւ տեսակի վաղերը, որոնք կոչվում են տեղական բառով «Կախիթ», բոլորովին վնասվել են, իսկ միւս տեսակները կէսի, նոյն իսկ երեք քառորդի չափով։ Այս չափերը ի նկատի առած՝ եթէ Երեւան

Եւ նորագոյն հասարակական գիտութիւնն է, որ շտկեց քարոյագիտութեան էտիկայի վրիպումները։ Նա եկաւ ուսուցանելու մեզ, որ համաշխարհային, բացարձակ իմպերատիվները (մի կեղծելիք եւ այլն) անհնար են, ուտոպիական, որ քարոյականութեան հրահանգները յարաբերական են եւ փոփոխվում են համաձայն տեղի ու ժամանակի, կրթութեան, սօցիալական պայմանների եւ այլն։ Հասարակական գիտութիւնը, էլժօլիցիօնիզմի դօկտրինը հրահանգված՝ ուսուցանում է մեզ, որ ժամանակակից մարդը ճակատագրօրէն կրում է դեռ իր մէջ իր հետաւոր, անանա-կան նախաձայրերի բնազդունները, որ է գօ-լիզմը նրա էական յատկանիշն է, որ դաստիարակութիւնը մեղմում է, անշուշտ, նրա մոլեգնութիւնը, սակայն չէ կարողանում իսպառ վերացնելը։ Բայց սօցիօլոգիան ուսուցանում է նաեւ, որ ալտուրիզմը եւս կազմում է եւ կազմել է միշտ մարդկային էութեան հիմնական առիթուր։ Անկախ մարդկանցից, անկախ բարոյագէտ-քարոզիչներից, սոսկ էլժօլիցիայի օրէնքը՝ գործութեամբ՝ ստեղծվել են մարդկային հասարակութեան մէջ էտիկայի այդ երկու հիմնական առիթուրները, որոնք եւ դարերի ընթացքում կառավարել են մարդկանց յարաբե-րութիւնները։

Էգօիզմ եւ ալտուրիզմ, մինը՝ կուի եւ ա-տիւնութեան, միւսը՝ սիրոյ եւ համերաշխու-թեան սկզբունք—թագաւորել են ի սկզբանէ՝ իրրեւ երկու հակառակեաց, բայց եւ իրրեւ փո-խադարձ լրացուցիչներ (correlate)։ Եթէ ան-գամ ալտուրիզմը վերջական քննութեամբ վե-րածվի էգօիզմին՝ դա չէ կարող այնու ամե-

ւանի գաւառի վնասը արտայայտենք թէկուզ կիսով չափ, այնուամենայնիւ վնասը 800,000 ռուբլու կը հասնի։ 1900 թիւը ընդունելով մի-ջակ բերք ունեցող տարի, որի խաղողի բերքը հնահատված է եղել 559,000 ռուբլու Այս չափը ընդունելով, որպէս ընդհանուր չափ ամբողջ նահանգի նկատմամբ վնասների տեսակէտից, կը ստացվի 500,000 ռուբլու մի խոշոր դուրսար-Ա—Դօ

ՆԱՄԱԿ ՆՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 8-ին

«Մշակի» երէկվայ համարում № 97, զետեղ-ված էր Բագուից գրված մի թղթակցութիւն, որ վերաբերում էր Բագուի՝ Մարգարաբական Ընկերութեան ընդհանուր ժողովին եւ այդ ժողովում իմ տուած բացատրութիւններին։ Ընդհանուր ժողովը դեռ չարունակվում է, այն-պէս որ դեռ վաղաժամ է որ եւ է որոշ եզրա-կացութեան զայ ընկերութեան վարչութեան կամ նրա այս կամ այն անդամի գործունէու-թեան եւ բունած դիւրի վերաբերեալ։ Եւստի-տեղ է առ այժմ օպասել մինչեւ յարուցած հարցերի վերջնական պարզարկվելը։ Հաւա-տացած եմ, որ ժամանակին անաչառ մի թղթակցի—բոլորովին ազատ պոտոր քրտւմ ձուկ որաւուր զիտաւորութիւնից—երեւան կը հանէ վարչութեան գործունէութեան եւ ընդ-հանուր ժողովի ճիշդ պատկերը։ Այժմ ասանա-նախակվում եմ թղթակցի այն տողերով, որ վերաբերում են իմ անհատութեան թղթ-թակցի պ. «Անդամ», եթէ «աչքերը ձգած» չը կարգար վարչութեան հայրը եւ տեղեկա-գիրը եւ մի եւ նոյն ժամանակ ընդհանուր ժո-ղովում «ապաշտ» ինձ չը լսէր, անկասկած նա կը բռնէր, որ վարչութեան կազմած տեղեկա-գիրը եւ իմ ասածները ոչ միայն կապ չունեն միմեանց հետ, այլ միանգամայն տարբեր հար-ցեր են ներկայացնում։ Տեղեկագիրը վերաբե-րում է դրամական հաշիւներին եւ վարչութեան ընդհանուր գործունէութեան։ Նրա տակը յի-շատակված են եւ ոչ թէ ստորագրված վար-չութեան անդամների ազգանունները, այլ ոչինչ, եթէ այդ ստորագրութիւններին, որ եւ նշա-նակութիւն տրվելու էլ լինի, պատշաճանալի-այս դէպքում հարկ չը կայ մասնագոյն անե-լու, քանի որ խնդիր վերաբերում է Ալլախ-տանդի տանը, որը ունի իր յատուկ մասնա-ժողովը, որին պատկանելու պատիւը չու-նեմ եւս։

Ընդհանուր ժողովում արտայայտած իմ բո-ղորդ հետեւանք էր վարչութեան անդամներից մէկի տուած միայն տեղեկութեան իմ կարծի-քով եւ իրաւունք չունէի լուր այն դէպքում, երբ ճշմարտութիւնը օտանկղիւ է անվում։ Եւ ասացի այն, ինչ որ գիտէի, ինչ որ իրողու-թիւն էր։ Ուրիշ կերպ եւ վարվել չէի կարող։ Եթէ պ. թղթակցի «Անդամ» այլ կարծիք տէր է եւ ցանկանում է տեսնել, որ եւ իրեւ վարչութեան անաչառ ճամբարութեան տեսակէտից՝ պէտք է լռէի, ճշմարտու-թիւնը քողարկէի, լուր այն նպատակով, որ հակաճառած չը լինեմ վարչութեան միւս անդամին, այդ իր գործն է, թող ինքը այդ «տակաւով» շարունակէ իր «բարեխիղճ» գործունէութիւնը, սուտ ու միայն տեղեկու-թիւններ հրապարակ նետէ, որքան ցանկանում է, սակայն չը համարձակվի անտեղի քարոզներ

նայելու ժխտել երկու հոգեկան բնազդուններին ինքնաւոր գոյութիւնը։

Ուտոպիստներից ոմանք (Կարլայլ, Նիչէն) չեղածու են միմիայն կուի սկզբունքը, զանց անելով համերաշխութիւնը։ Ուրիշները (Տօլս-տոյ եւ այլն) իրանց հաւատող հանգանակների մէջ չեղում են միմիայն սէրն ու համերաշ-խութիւնը եւ մոռանում են կուի սկզբունքը։ Սակայն ճշմարտութիւնը երկուսի համադրու-թեան մէջ է։ Ի սկզբանէ անախ եղել է եւ կորեւ եւ համերաշխութիւն։ Օրդան օրդայի դէմ է կուել, ցեղը ցեղի դէմ, դասակարգը դասա-կարգի,—բայց ամեն մի օրդայի, ցեղի ու դա-սակարգի մէջ մարդ-անհատը կապված է եղել համերաշխութեան սերտ ու անհրաժեշտ կա-պով, եւ այդ համերաշխութիւնը նոյնքան ծան-կալիւն մի գործօն է եղել հասարակական է-վօլիցիայի մէջ, որքան եւ կուելու թւում է, թէ երկու սկզբունքներն էլ յաւիտենական են։ Բայց որքան փոխվում են նրանք ժամանակի հոսանքում։ Անփոխելի է, որ քաղաքակրթու-թեան պրօգրէսի ընթացքում կուի սկզբունքը աստիճանաբար թլուղանում, մարդկայնանում է, կուել հնչ համերաշխութեան փաստը չեղելով։ Եւ միշտ աւելի ուժեղ եւ ցայտուն։ Գոյութեան ուժեղ կուի գոհերը կենդանի խաչվում ու լախվում են նախապատմական շրջանում, ապա ստրկացվում էին հին եւ միջին դարերում։ Իսկ այսօր նրանք հալարտ են եւ անհնկելի, նորիս այն յարաճուն եւ համատարած համե-րաշխութեան, որ տիրում է նրանց մէջ։ Եւ նորագոյն հասարակական գիտութիւնը սանկ-ցիա է տալիս այդ համերաշխութեան, որով միայն պիտի հնարաւոր լինի բանալ տիրող

կարգալ եւ անբիծ անուններ ամօթաբեր գրչի սիւթ գարձակը։

Կ. ԽՈՇՈՇՆԵՐ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՍԻՐ

Մտադրութիւն կայ Թիֆլիսի քաղաքային դուռայի նոր ճայնաւորների ընտրութիւնը յե-տաճիւ մինչեւ աշուն։

Մտավաճառութեան քաղաքային խանութի բացումը Թամաշելի քարվանսարայում վերջ-նականապէս նշանակված է առաջիկայ կիրակի, մայիսի 12-ին։

Ռուսական առեւտրին եւ արդիւնագործու-թեանը նպաստող ընկերութիւնը մասնաժողով է կազմել մի այնպիսի հիմնարկութեան ծրա-գիր մշակելու համար, որ աշակցէր տնայ-նագործներին նրանց արդիւնները վաճառահա-նելու մէջ եւ մի եւ նոյն ժամանակ նիւթական օգնութիւն ցոյց տար՝ կրէջիտ բանալով նրանց համար այդ հիմնարկութեան միջոցներից։

Կարճ ժամանակից յետոյ գործածութեան մէջ կը մտնեն Պետերբուրգի դրամատատկան տան պատրաստած ոսկեայ 25 ռուբլանոց դրո-ները։

Որովհետեւ վերջին ժամանակներս նկատվե- է, որ Կաղզվանի շրջանի Աղզամ գիւղի ծո-գեաները հետզհետէ նստում է եւ ցածրանում, երկրագործութեան եւ պետական կալուածների միմիայն կուլիւսեան լիազօր Մեղիւնելի դիմա-կուլիւսեան լեռնային վարչութեան՝ խնդրելով մի երկրաբան ուղարկել Աղզամ գիւղը՝ նկատ-ված վտանգաւոր երեւոյթի պատճառները ըննե-լու եւ բնակիչների պաշտպանութեան հա-մար անհրաժեշտ միջոցները ձեռք առնելու։ Կուլիւսեան լեռնային վարչութիւնը ուղարկեց ինչլիւս տեղը լեռնային ինժեներ Մարգարիտ-սին։

Ժողովրդական լուսաւորութեան միմիայնութիւնը մշակել է մի շարք միջոցներ, որոնցով հեշտանում է նոր լոյս տեսնող հեղինակու-թիւնների մուտքը ժողովրդական ձրի եւ էժա-նագին գրադարան-ընթերցարաններում։

Ռուսական զէնստվոնների վարչութիւնները մօտ ժամանակներում գիմել էին ներքին գոր-ծերի միմիայնութիւն, խնդրելով միջնորդութիւն արուցանել, որ թող տրվի կանանց ծառայելի-զէնստվոնների զիւսանմանը։ Այժմ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրիչները, նե-րքին գործերի միմիայնութիւնը մերժել է զէնստվոնների վարչութիւնների խնդրը։

Որոշված է յօգուտ համալսարանների վերջ-նել ատամնաբոյժի քննութիւն բռնող անձներից

չարիքները, բաւալ կուի սկզբունքը ընդհա-րապէս եւ փոխարինել նրան խաղաղ, օրինաւոր մրցումով։

Ռուսաստանի ու Տօլստոյների քաղաքակրթու-թեան ստուգալային կողմերն են միայն տեսնում յուսալար ու զարգացիւ խարազանում են առաջադիմութիւնը, պրօգրէսը։ Նրանք նմա-նում են անտուն, թափառական այն աշխատա-ւորներին, որոնք 19-րդ դարի սկզբներում հա-լածում էին մեքենան, յարձակվում, ջարդ ու փշուր էին անում երկաթուղու գնացքները, որովհետեւ նրանք էին իրք թէ այդ աշխատա-ւորների թշուառութեան պատճառը։

Հասարակական գիտութիւնը վերջ դրեց մտքի այդ յուսահատ դեգերումներին։ Նա մի անգամ ընդ միշտ դուրս վանեց պետսիմիա-իդէալիս-տական ամուլ մարդանքները եւ հաստատեց առողջ ուշախառական մի աշխարհայեացք։ Նա ծաղրեց ոմանց պարզամիտ աղաղակները՝ «դէպի բնութիւն ու հովաւական կեանք», ուրիշների մե-լամաղձոտ, ցաւագին յորդորը՝ «դէպի ֆէոդալ-լիզմ ու ստրկութիւն»—եւ ինքը հնչեցրեց ան-ընդհատ պայքարի, շարունակական պրօգրէսի կոչը։ Քաղաքակրթութիւնը շարիք է, այլ ոչ թիւ։ Նա անանկութիւնն է յայտարարել, այլ միայն հիւանդ է, ցաւոտ։ Նա նմանում է երկ-սայրի սրի, նա աւերիչ է, նոյն իսկ աղետաբեր, քանի դեռ չեն ճանաչում նրա օրէնքները, երբ կը դառնայ բարեբար ու աշխարհաշէն, երբ դեկավրութիւնը իր ձեռքը կառնէ նրա գերագոյն

Դա մի գուարթ աշխարհայեացք է, որից բուրում է լաւատեսութիւն։

Электросчетная Група. Исдат. Т—ва. Б. Вавицкая ул.